

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 14

2015թ. հունիսի 18-ին տեղի ունեցած

Բնագիտաաշխարհագրական ֆակուլտետի

խորհրդի N14 նիստի

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

Նիստին մասնակցում էին խորհրդի 17 անդամներից 16-ը:

Օրակարգ:

1. Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման վերլուծական ռուբրիկի քննարկում:

2. ԳՊՄԻ-ի < Ակադեմիական ազնվության > հայեցակարգի քննարկում:

ԼՍԵՑԻՆ՝ 1. Պրոֆեսորադասախոսական կազմի գնահատման վերլուծական ռուբրիկի մասին դեկանի խոսքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Կատարել հետևյալ առաջարկները՝

1. Խմբագրել առաջին սյունակում գրված **անբավարար որակի դասավանդում** արտահայտությունը

2. **ռուբրիկ** բառը փոխարինել սանդղակով

3. **Մասնակի թերություններով և օրինակելի օրացուցային պլանը**

փոխարինել ձևաչափին համապատասխան և ձևաչափից շեղված տարբերակով

4.Նախկինում ուսանողների կողմից դասախոսների գնահատումը հաճախակի կրել է սուբյեկտիվ բնույթ, ինչը միշտ չէ որ համապատասխանել է իրականությանը:

5. Որպես անգլերենի իմացության սահման ընդունել մասնագիտական տեքստի թարգմանություն՝ բառարանի օգնությամբ:

6.Որպես օտար լեզու,անգլերենից բացի ընդունել նաև այլ օտար լեզուների իմացությունը, մասնավորապես գերմաներեն և ֆրանսերեն:

7.Ժամկետների վերաբերյալ մեկ շաբաթի փոխարեն դարձնել մինչև ուսումնական տարվա սկիզբը:

8.Հարցումների գնահատականների վերլուծության օբյեկտիվության մեխանիզմների ապահովում:

9.Օտար լեզուների B մակարդակի պահանջը դարձնել մինչև 50 տարեկան դասախոսների համար:

10.Անհասկանալի է III բաժնի չափելիության համակարգը:

ԼՄԵՑԻՆ՝ 2 ԳՊՄԻ-ի < Ակադեմիական ազնվության> հայեցակարգի քննարկման շուրջ դեկանի խոսքը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ աշխարհագրության և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Լ.Մարտիրոսյանը, դեղագործական քիմիայի, քիմիայի և նրա դասավանդման մեթոդիկայի ամբիոնի վարիչ՝ Մ Սարգսյանը, կենսաբանության, բնապահպանության և նրանց դասավանդման մեթոդիկաների ամբիոնի վարիչ՝ Ա.Գրիգորյանը, դոցենտ՝ Կ.Պետրոսյանը:

ՈՐՈՇԵՑԻՆ. Ընդունել ի գիտություն:

Նախագահ՝ Ա.Գրիգորյան

Քարտուղար՝ Հ.Եղիկյան

18.06.2015